

Գիտաժողով նվիրված հայ-իտալական գիտական կապերի զարգացմանը



Հունվարի 26-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված հայ-իտալական գիտական կապերի զարգացմանը:

Գիտաժողովին ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և Իտալիայի ազգային հետազոտական խորհրդի նախագահ պրոֆեսոր Մասիմո Ինգուչոն:

«Լավ է, որ Հայաստանի և Իտալիայի գիտնականները համագործակցության ճանապարհին են ընտրել և վստահեցնում են, որ նախագահական ինստիտուտն ամեն ինչ կանի, որ այդ համագործակցությունը խորանա», - իր ելույթում ասաց ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը նշեց, որ արդեն իսկ ստորագրվել է գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում հայ-իտալական համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը, որի շրջանակներում կամրապնդվեն երկու երկրների գիտնականների կապերը, կիրականացվեն համատեղ ծրագրեր: Համագործակցության հիմնական ոլորտներն են՝ ֆիզիկան և աստղաֆիզիկան, քիմիան, մոլեկուլային կենսաբանու-

յունը, գյուղատնտեսական գիտություններ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, հնագիտություն և արվեստագիտություն:

Իտալիայի ազգային հետազոտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Մասիմո Ինգուչոն իր ողջույնի խոսքում նշեց, որ հայ-իտալական գիտական համագործակցության հիմքում ընկած է ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի այցը Իտալիա, որի շրջանակներում նախագահը հանդիպել է իտալացի գիտնականների հետ:

Գիտաժողովին «Համաշխարհային ռիսկերի քվանտային վարքագիծը» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը: Իտալիայի ազգային հետազոտական խորհրդի նախագահ պրոֆեսոր Մասիմո Ինգուչոն ներկայացրեց «Հեղափոխության իրականացումը քվանտային տեխնոլոգիաներում հանուն մարդկության և Մոլորակի» զեկուցումը: Ընդհանուր ներկայացվեց 9 զեկուցում ՀՀ ԳԱԱ-ի կառույցների, Իտալիայի ազգային հետազոտական խորհրդի, Երևանի պետական համալսարանի, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի, «Քենդլ» ինստիտուտի, Իտալիայի օպտիկայի ազգային ինստիտուտի ներկայացուցիչների կողմից:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն